



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ board@ysu.am , www.yasu.am

№ 016 «20» փետրվարի 2020թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝
2020թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած թիվ 16 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 14-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը, իսկ քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար Գրիգոր Հայրապետյանը:

Օրակարգը՝

1. 2018-2019 ուստարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվության ներկայացում և 2016-2020 թթ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրով 2018-2019 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2019թ. (հունվար-դեկտեմբեր ամիսներ) եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում:
3. Ընթացիկ հարցեր

Քվեակազմի բացակայության պատճառով ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում օրակարգային 3 հարցով Խորհրդի թիվ 16 նիստը հետաձգվեց:

Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը նշեց, որ համաձայն Խորհրդի աշխատակարգի 3.6 կետի նիստն իրավազոր չէ: Խորհրդի նախագահը նաև նշեց, որ կային շատ կարևոր հարցեր (կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի

տարեկան հաշվետվություն, սանիտարական մաքրության ապահովում և այլն) և որպեսզի համալսարանի բնականոն աշխատանքը չխաթարվի, ապա հաջորդ անգամ նիստը կանցկացվի հարցման կարգով:

Այնուհետև ձայնի իրավունք խնդրեց Խորհրդի անդամ Դ.Ափոյանը: Նա հայտարարեց, որ Խորհրդի նիստին Խորհրդի անդամ ուսանողների նման բացակայությունների մակարդակը բողոքի նշան է՝ ուղղված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծով կառավարման խորհրդի կազմում ուսանող անդամների թվի կրճատմանը: Դ.Ափոյանը նշեց, որ նա ֆիզիկապես ներկա է, սակայն չի ստորագրել Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակում: Այդ կերպ նրանք ցանկանում են մեկ անգամ ևս կառավարության ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ուսանողների մասնակցությունը բուհի կառավարմանը շատ կարևոր է, և նրանց թվի կտրուկ կրճատումն ուղիղ հարված է հասցնում բուհի ինքնավարությանը: Հետագայում նրանք պատրաստվում են ձեռնարկել այլ քայլեր, որպեսզի գիտական հանրության ուշադրությունը հրավիրվի այդ հանգամանքի վրա: Դ. Ափոյանը ասաց, որ ուսանողների բողոքն ուղղված չէ որևէ անձի դեմ, սակայն իրենք ստիպված են կատարել այդ գործողությունները, որպեսզի բոլորի ուշադրությունը հրավիրեն այդ հանգամանքի վրա և ներողություն խնդրեց Խորհրդի ներկա անդամներից և խնդրեց ըմբռնմամբ մոտենալ:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն իր կարծիքը հայտնեց բողոքի վերաբերյալ՝ այն համարելով ոչ արդյունավետ համալսարանի կառավարման տեսանկյունից և բոլորին մաղթեց հաջողություն:

Խորհրդի նախագահ՝

Գ. Մուրադյան

Խորհրդի քարտուղար՝

Գ. Հայրապետյան